

ՆԱՅԵՐՆ ԱՅՍՕՐ

115

ՀՀ ՍՓՅՈՒՐՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Տնտեսություն

Սփյուռքի նախարարությունը հանդես է եկել «Հայկական առևտրական ցանց» ստեղծելու նախաձեռնությամբ

«Հայկական առևտրային ցանցը» մեծ առաքելություն ունի, կարծում է Վահրամ Փիրջանյանը

ՀՀ սփյուռքի նախարարություն

Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի առաջին նիստը Երևանում աշխատանքները սկսեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը

ՀՀ սփյուռքի նախարարին առընթեր ստյանը քննարկել է «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» ծրագիրը

Սերտ համագործակցություն Պերմի երկրամասի հայ համայնքի հետ

ՀՀ ժողովրդական արտիստ, աշխարհահռչակ տենոր Վահան Միրաբյանը պարզևատրվեց ՀՀ սփյուռքի նախարարության «Կոմիտաս» մեդալով

ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվեց հեռակոնֆերանս Հայեպի հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ

«Միայն համախմբվածության արդյունքում մենք կունենանք բոլորիս երազած հզոր Հայաստանը, բոլորիս ցանկալի հզոր Հայրենիքը»

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի մասնակիցներին

Երևանում տեղի ունեցավ Ուրուգվայի «Կունկ» համույթի համերգը Հիշենք հայ ժողովրդի բարեկամ Վուդրո Վիլսոնին

Ստորագրվեց համատեղ հոչակագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և Արտաքաղաքականության նախարարության միջև

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարսելա Մարիա Նիկոդեմոսին

Սփյուռք

ԱՄՆ-ում ստեղծվել է Դիարբեքիի հայկական եկեղեցիների վերականգնման հիմնադրամ

Օլեգ Եսայան. Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մեկը նույնության պահպանումն է

Ստամբուլում տեղի է ունեցել բանակում սպանված հայ պատանու հուղարկավորությունը

Սոֆիայի Երևանյան պուրակում տեղի է ունեցել Հայոց Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցին նվիրված հավաք

Արարական Միացյալ Էմիրություններում նշել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

Կակաթայի Սուրբ Պողոս Մայր Տաճարում նշել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

Ղազախստանի և Ղրղզստանի մի շարք քաղաքներում հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

Ապրիլի 24-25 Սիրիայում անցել են միջոցառումներ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի

Վաշինգտոնում թուրքերը և ադրբեջանցիները փորձել են ձախողել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ակցիան

ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՐԳԵԼ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Արամ Ա-ն կարեւորում է Հայոց ցեղասպանության 100-ամյակի առթիվ ստեղծված հանձնաժողովի գործունեությունը

Բաթումում հարգանքի տուրք է մատուցվել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին

Իրանի գլխավոր հայկական համայնքները նշել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

Փարիզում Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված ցույցին մոտ 5 հազար մարդ էր հավաքվել

Սպորտ

Հայաստանի ձյուդոյի հավաքականը **World Children's Games** փառատոնում 3 մեդալ է նվաճել

Հայտարարություններ

«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՆ՝ ԱՐԴԵՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Թրիվիսահայերի ասամբլեայի մամուլի ծառայություն

Տնտեսություն



Սփյուռքի նախարարությունը հանդես է եկել «Հայկական առևտրական ցանց» ստեղծելու նախաձեռնությամբ

2011-04-29

Ապրիլի 29-ին ողջույնի խոսքով հանդես է եկել Հայաստանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Նրա խոսքերով, վերջին 20 տարում սփյուռքի ներկայացուցիչները, մասնավորապես, գործարարները, հսկայական ավանդ են ունեցել Հայաստանի զարգացման ճանապարհին և խնդիրների լուծման մեջ:

«Այսօր եկել է սփյուռքի լավագույն ներկայացուցիչների ջանքերը միավորելու պահը, և այս խորհրդածոհովը պետք է հարթակ ծառայի կառույցների և ինստիտուցիոնալ մոտեցումների ստեղծման համար, որոնք հետագայում օգնելու են ակտիվացնել Հայաստան-Սփյուռք, սփյուռք-սփյուռք հարաբերությունները տնտեսական ոլորտում», - ասել է նա: Հրանուշ Հակոբյանը նաև հույս է հայտնել, որ համաժողովի ընթացքում ստեղծվելու է հայ արդյունաբերողների ցանց, ընդլայնվելու են հայկական կազմակերպությունների հնարավորությունները բիզնեսի ոլորտում, ստեղծվելու են նման կառույցներ այն երկրներում, որտեղ դրանք չկան: «Մեր ընդհանուր նպատակն ուժեղ, զարգացած և հզոր Հայաստանն է, իսկ դրա համար անհրաժեշտ է ներգրավել հայության ողջ ներուժերը», - ասել է Հրանուշ Հակոբյանը:



«Հայկական առևտրային ցանցը» մեծ առաքելություն ունի, կարծում է Վահրամ Փիրջանյանը

2011-04-29

Ինչպես նշել է Փիրջանյանը, «Հայկական առևտրային ցանցի» ստեղծման նպատակը Հայաստան-սփյուռք տնտեսական հարաբերությունների զարգացումն է և

սփյուռք-սփյուռք կապերի ամրապնդումը: Դրա հետ կապված՝ նա հավելել է, որ ստեղծվելու է կառույց, որը չի հետապնդելու քաղաքական և մենատիրական նպատակներ, այլ ուղղված է լինելու բիզնես-հնարավորությունների ընդլայնմանն ինչպես Հայաստանում, այնպես էլ սփյուռքում: Միաժամանակ, նա հույս է

հայտնել, որ սփյուռքի գործարարները կարող են արդյունավետ աշխատել միասին և մեծ բարձունքների հասնել:

Նա հաղորդել է, որ Կանադայի հայ գործարարների դրամաշրջանառությունը կազմում է 10 մլրդ դոլար, այն դեպքում, երբ Հայաստանի բյուջեն 3 մլրդ դրամ է:

ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ, Հայ-կանադական գործարար խորհրդի և Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի աջակցությամբ ապրիլի 28-30-ը տեղի է ունենում «Հայկական առևտրական ցանց» ստեղծելու հիմնադիր խորհրդաժողովը, որին մասնակցում են 30 մասնագետներ աշխարհի 9 երկրներից, այդ թվում՝ Ֆրանսիայից, Բելգիայից, Կանադայից, ինչպես նաև Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը, Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, ՀՀ ԱԱՊ նախագահ Մարտին Սարգսյանը և Կանադա-Հայաստան գործարարների խորհրդի նախագահ Վահրամ Փիրջանյանը:



ՀՀ սփյուռքի նախարարություն
**Հայ առևտրաարդյունաբերական
պալատների և գործարարների
միությունների ներկայացուցիչների
խորհրդաժողովի առաջին նիստը**

2011-04-30

Նիստի ընթացքում խորհրդաժողովին մասնակցող Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ղեկավարները և ներկայացուցիչները համառոտ տեղեկություններ ներկայացրեցին իրենց կազմակերպությունների գործունեության վերաբերյալ:

Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը մանրամասներ ներկայացրեց պալատի ստեղծման, գործունեության վերաբերյալ: Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատը 20 երկրում ստեղծել է ներկայացուցչություններ, որոնք ներկայացնում են վերջինիս ծրագրերը: Պալատին կից ստեղծվել է արբիտրաժային դատարան:

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության գործադիր տնօրեն Էդուարդ Կիրակոսյանը, ներկայացնելով միության գործունեությունը, նշեց, որ հայ գործարարներն ու արդյունաբերողները միայնակ գործելու դեպքում կարող են որոշակի հաջողություններ ունենալ, սակայն միասնաբար գործելու պարագայում կհասնեն լուրջ հաջողությունների:

Արցախի ներդրումային հիմնադրամի ներկայացուցիչ Մհեր Մխիթարյանը ծանոթացրեց հիմնադրամի հիմնական նպատակներին՝ նշելով, որ ներկայումս այն աշխատում է Արցախում գործող շուրջ 200 սուբյեկտների հետ:

Վազգեն Թերզյանը ներկայացրեց 1987թ. հիմնադրված Կանադա-Հայաստան գործարարների խորհրդի գործունեությունը: Տորոնտո քաղաքի և մերձակա շրջանների հայ գործարարների թիվը գերազանցում է 1500-ը: Խորհուրդը, որն ունի 100-ից ավելի անդամներ, կարևոր դերակատարություն ունի Տորոնտոյի հայ համայնքում: Խորհրդի հիմնական նպատակն է՝ աջակցել հայ գործարարներին: Այն նաև խորհրդատվություն է տրամադրում համալսարանավարտ երիտասարդներին, աջակցում բիզնես սկսելու գործում:

1999թ. ստեղծված Հայ-ամերիկյան առևտրական պալատի գործունեությանը ծանոթացրեց Նիք Հակոբյանը՝ մասնավորապես անդրադառնալով պալատի կողմից ԱՄՆ-ում կազմակերպված հայկական ապրանքների երկու էքսպո-ցուցադրություններին:

Ավստրալիայի հայկական առևտրական պալատի ստեղծման և գործունեության վերաբերյալ մանրամասներ ներկայացրեց Գարո Սաթյանը: 60 անդամ ունեցող պալատն աջակցում է հայ գործարարներին, խրախուսում Հայաստանում և Արցախում տնտեսական գործունեություն ծավալելուն: Արդեն կան թե Հայաստանում, և թե Արցախում տնտեսական հաջող գործունեություն իրականացնող ավստրալահայ գործարարներ:

Միշել Դավուդյանը ծանոթացրեց Հայ-բելգիական առևտրական պալատի գործունեությանը՝ նշելով, որ Հայաստանի անկախացումից հետո Բելգիան առաջին երկրներից էր, որ սկսեց տնտեսական գործակցություն ծավալել Հայաստանի Հանրապետության հետ, մասնավորապես ադամանդագործության ոլորտում:

Մարսելում 1992թ. ստեղծված և 1996թ. գրանցված Հայ-ֆրանսիական առևտրական պալատի գործունեությունը ներկայացրեց Ժակ Ավդոյանը: Պալատի գործունեության հիմնական նպատակն է համախմբել հայ գործարարներին և քաջալերել նրանց՝ տնտեսական գործունեություն ծավալել Հայրենիքում: Պալատն անդամակցում է Ֆրանսիայի առևտրական պալատների ասոցիացիային, ունի 250 անդամ: Ժ.Ավդոյանն առաջարկեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների հաջորդ հավաքն անցկացնել Մարսելում:

Փարիզում 1991թ. հիմնված «Հայ միջմասնագիտական միջազգային խմբավորում» կազմակերպությունը ներկայացրեց Արմեն Վալյանը: Նա նշեց, որ կազմակերպությունն իր մասնակցությունն է ունեցել աղետի գոտու վերականգնմանը: Հիմնական նպատակն է սերտացնել կապը Հայաստանի և Ֆրանսիայի գործարարների միջև: Կազմակերպությունը Հայաստանում հիմնել է գրասենյակ, աջակցում են փոքր և միջին բիզնեսի զարգացմանը:

Նազարեթ Սաբունջյանը ծանոթացրեց Լիբանանի հայ գործարարների ընկերակցության գործունեությանը: 1997-ին հիմնված և 1999թ գրանցված

միությանն անդամակցում են Լիբանանի տարբեր մասնագիտական ընկերակցությունների խորհրդի անդամներ և հայ գործարարներ: 1997թ. և 1999թ. ընկերակցությունը կազմակերպել էր Հայաստան-Լիբանան գործարարների խորհրդաժողով, որոնց մասնակցելու համար հրավիրել էր գործարարների նաև Հայաստանի Հանրապետությունից: Բազմաթիվ լիբանանցիներ տնտեսական գործունեություն են ծավալու Հայաստանում և Արցախում:

Մի քանի ամիս առաջ հիմնադրված Հայ-լիբանանյան բարեկամության ընկերակցությունը ներկայացրեց Հրայր Դանձիկյանը: Ընկերակցությանն անդամակցում են ինչպես հայազգի, այնպես էլ ոչ հայազգի լիբանանցիներ: Հիմնական նպատակն է զարգացնել հայ-լիբանանյան գործարար կապերը՝ նպաստելով տնտեսական համագործակցության ակտիվացմանը:



Երևանում աշխատանքները սկսեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդաժողովը

2011-04-29

Ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը, Հայ առևտրաարդյունաբերական պալատների եւ գործարարների միությունների ղեկավարներ և ներկայացուցիչներ 9 երկրից՝ Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Իրան, Լիբանան, Ավստրալիա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետություն, ինչպես նաև Հայրենիքում գործունեություն ծավալած սփյուռքահայ գործարարներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից ողջունելով խորհրդաժողովի մասնակիցներին և բարի երթ մաղթելով խորհրդաժողովի աշխատանքներին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը հակիրճ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության սոցիալ տնտեսական ներկա իրավիճակը: Տ.Սարգսյանն անդրադարձավ Հայաստանի տնտեսական համակարգի կառուցվածքին՝ ներկայացնելով արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ծառայությունների և մյուս ոլորտներում առկա վիճակն ու զարգացման հեռանկարները: Վարչապետը ներկայացրեց նաև Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները, անդրադարձավ ներդրումային մթնոլորտին, գնաճի կրճատմանն ուղղված քայլերին:

Ողջունելով խորհրդաժողովի մասնակիցներին հրավերն ընդունելու համար՝ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց Կանադա-

Հայաստան գործարարների խորհրդին՝ խորհրդաժողովի կազմակերպմանն աջակցելու համար:

«Անցնող 20 տարվա ընթացքում՝ Հայաստանի անկախացումից հետո սփյուռքահայերը, մասնավորապես գործարարները, շատ մեծ ներդրում ունեցան մեր երկրի զարգացման, առաջընթացի գործում: Դրանք եղան և կազմակերպված, և անկազմակերպ, և անհատական, և կառույցների ու կազմակերպությունների միջոցով: Պետական ինստիտուտներ, օրենսդրություն ստեղծելուց հետո, որը հնարավորություն է տալիս Հայաստանն ավելի մատչելի և գրավիչ դարձնելու ներդրումների համար, այսօր հասունացել է պահը աշխարհասփյուռ հայ ժողովրդի տնտեսական ներուժը համախմբելու: Այս խորհրդաժողովը կարծում եմ, այն հաթակը պետք է լինի, որ մենք ստեղծենք ինստիտուցիոնալ կառույցներ՝ հետագայում առավել ակտիվացնելու Հայրենիք-Սփյուռք տնտեսական կապերը: Հանրապետության նախագահը, ինչպես գիտեք, դիմեց մեր հայ գործարարներին, ասելով, որ պետք է կոտրել այն կարծրատիպը, որ Հայաստանում միայն բարեգործություն են անում: Հայաստանում ներդրումներ կատարելով՝ կարող եք գումար վաստակել, շահ ունենալ՝ նպաստելով Հայաստանի զարգացմանը: Հայաստանին այլևս պետք չեն հումանիտար ծրագրեր, Հայաստանին պետք են զարգացման ծրագրեր, իսկ Հայաստանի տնտեսությունը ստեղծել է շահավետ հնարավորություններ ներդրումների համար: Դրանից նախ և առաջ պետք է օգտվեն աշխարհասփյուռ մեր հայ գործարարները: Այս համաժողովի ընթացքում, կարծում եմ մենք պետք է լուծենք մի քանի խնդիր: Առաջինը՝ ստեղծել հայ առևտրաարդյունաբերողների ցանց, երկրորդ՝ օգնել տարբեր երկրներում գործող հայկական առևտրական կառույցներն ու գործարարներին միություններին, որպեսզի ընդլայնեն իրենց հնարավորությունները, երրորդ՝ այն երկրներում, որտեղ մենք չունենք նման կառույցներ, պետք է նաև ձեր աջակցությամբ կարողանանք ստեղծել նման կառույցներ, չորրորդ՝ պետք է համատեղ ուժերով մշակել այնպիսի նախագծեր, որոնք կնպաստեն Հայաստան-Սփյուռք և Սփյուռք-Սփյուռք կապերի ամրապնդմանը: Եվ, վերջապես, կարծում եմ, որ մենք պետք է ձեր գիտելիքները, փորձը, հնարավորությունները օգտագործենք, որպեսզի առավել մատչելի, հրապուրիչ դառնա տնտեսական միջավայրը և խթանենք ներդրումները Հայաստանի Հանրապետությունում, որովհետև մեր բոլորի նպատակն է զարգացած, ուժեղ, հզոր Հայաստան ունենալ, իսկ այդ հզոր, ուժեղ Հայաստանի համար պետք է ներգրավենք ողջ հայության ուժերը, հնարավորությունները: Շատ խորհրդանշական է, որ այն ցանցը, որ մենք այսօր ուզում ենք ստեղծել, կոչվում է «ՀԱՑ»՝ հայ առևտրաարդյունաբերական ցանց, այսինքն՝ «ՀԱՑ»-ը պետք է օգնի, որ մեր հայրենակիցները մնան Հայաստանում, ունենան աշխատանք, վաստակեն իրենց հանապազօրյա հացը, կրճատեն արտագաղթը, կրճատեն աղքատությունը, զարգացնենք Հայաստանը նաև «ՀԱՑ»-ի միջոցով»,- նշեց ՀՀ սփյուռքի նախարար Հ.Հակոբյանը:

Այնուհետև ջերմորեն շնորհավորելով Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի մասնակիցներին և ցանկանալով արդյունավետ աշխատանք՝ Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը ներկայացրեց իր դեկավարած կառուցի գործունեությունը:

Կանադա-Հայաստան գործարարների խորհրդի նախագահ Վահրամ Փիրջանյանը, ողջունելով խորհրդաժողովի մասնակիցներին, ընդձեռնեց, որ ստեղծվելիք հայկական առևտրային ցանցի հիմնախնդիրներն են Սփյուռքի և Հայաստանի տնտեսական զարգացումը, ինչպես նաև Սփյուռք-Սփյուռք գործակցության հզորացումը: «Մենք ուզում ենք աշխարհասփյուռ հայկական գործարար աշխարհը միավորել մեկ տանիքի տակ և ստեղծել կապեր՝ միասին աշխատելու, նույն լեզվով իրար հետ խոսելու համար», - նշեց Վ. Փիրջանյանը:

Ողջույնի խոսքերին սկսվեց խորհրդաժողովի առաջին նիստը, որը նախագահում էր Ավստրալիայի հայկական առևտրական պալատի ղեկավար Վահե Արթինյանը:



ՀՀ սփյուռքի նախարարին առընթեր ատյանը քննարկել է «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» ծրագիրը

2011-04-29

Օրակարգում ընդգրկված էին «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի», «Ուսումնական և հանրամատչելի գրականության առաքում Սփյուռքի կրթօջախներին» ծրագրերը, ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության հաշվետվությունը և ընթացիկ այլ հարցեր:

ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Ստեփան Պետրոսյանը ներկայացրեց Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների ամառային դպրոցի ծրագրի նպատակները, հիմնական խնդիրները, գերակայությունները՝ անդրադառնալով ակնկալվող արդյունքներին: Նա մասնավորապես նշեց, որ նպատակ է դրված «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» շրջանակներում հայ երիտասարդ առաջնորդների համար ստեղծել փոխադարձ ճանաչողության դաշտ, կապել Հայրենիքի հետ, ծանոթացնել նախարարության համակարգին, ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկություններին, կազմակերպել հանդիպումներ պետական իշխանության համակարգի ներկայացուցիչների, ՋԼՄ-երի հետ, մշակել հետագա համագործակցության ձևեր և միջոցներ: Դպրոցի աշխատանքը կրելու է պարբերական բնույթ, կկազմակերպվի յուրաքանչյուր տարի:

Խնդրին միջամտեց նախարարը՝ նշելով, որ Ռուսաստանի հայերի միության և

Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանի հետ քննարկելով նախարարության մի շարք ծրագրեր՝ որոշել են մի քանիսին համահեղինակել: Համաձայն այս պայմանավորվածության նախատեսվում է «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցի» կազմակերպումը հետաձգել մոտ մեկ ամսով, որպեսզի հնարավորինս շատ հայ երիտասարդներ մասնակցեն «Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների դպրոցին» հաջորդող երտասարդական համաժողովին:

«Ուսումնական և հանրամատչելի գրականության առաքում Սփյուռքի կրթօջախներին» ծրագրի ընթացքի մասին զեկուցեց ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի ղեկավար Ֆիրդուս Զաքարյանը: Նա ներկայացրեց ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2008-2010թթ. ընթացքում ձեռք բերված և Սփյուռք փոխանցված ուսումնական գրականության մասին հակիրճ տեղեկություններ: Ֆիրդուս Զաքարյանը նշեց նաև, որ 2008-2010թթ. ընթացքում Սփյուռքի կրթօջախների կողմից ամենամեծ պահանջարկ են ունեցել հիմնականում դասագրքերը:

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի համահայկական ծրագրերի վարչության կողմից 2010թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությամբ հանդես եկավ վարչության պետ Ատոմ Մխիթարյանը: Նա ներկայացրեց «Մեր մեծերը», «Արի տուն», «Մայրենիի տարի», «Սփյուռքի հայկական կրթօջախներին ուսումնական գրականության առաքում», «Մեկօրյա դպրոցների ցանցի ընդլայնում», «Քույր դպրոցներ» և այլ ծրագրերի շրջանակներում վարչության կողմից իրականացված աշխատանքները, հաղորդում է ՀՀ սփյուռքի նախարարության մամլո ծառայությունը:

Մերտ համագործակցություն Պերմի երկրամասի հայ համայնքի հետ

2011-04-28

Վերը նշված հանդիպման ընթացքում ի թիվս այլ հարցերի բարձրացվել էր նաև Պերմում մայիսին նախատեսվող «Պերմի սպիտակ գիշերներ» փառատոնին հայաստանյան որևէ ջազային համույթի մասնակցության և Հայաստանի և Պերմի երկրամասի զբոսաշրջիկային գործակալությունների միջև կապեր հաստատելուն օժանդակելու հարցերը:

Վերջին հարցի առնչությամբ այսօր ՀՀ սփյուռքի նախարարություն էին հրավիրվել ինչպես Պերմի համայնքի ղեկավարի հոգևոր և մշակութային հարցերով տեղակալ Կարեն Պապյանը, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության հետ համագործակցող «Ադվենտուր», «
», «Ավարայր», «Թրավելոն ՍՊԸ» և էլի մի քանի տուրիստական գործակալությունների տնօրեններ:

Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, մշակվեցին անելիքները: Ծրագրի

շրջանակներում նախատեսվում է այս տարվա մայիսի 25-ին հայաստանյան մի քանի տուրօպերատորների այց Պերմ՝ մասնակցելու երկրամասի առևտրաարդյունաբերական պալատի կազմակերպած միջոցառումներին:

Բարձրացված առաջին հարցի կապակցությամբ պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի պետական ջազային նվագախմբի հետ (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Արմեն Հյուսնունց) Պերմում մայիսին նախատեսվող «Պերմի սպիտակ գիշերներ» փառատոնին մասնակցելու համար:



**ՀՀ ժողովրդական արտիստ,
աշխարհահռչակ տենոր Վահան
Միրաքյանը պարզևատրվեց ՀՀ սփյուռքի
նախարարության «Կոմիտաս» մեդալով**

2011-04-28

Բարեգործական համերգին մասնակցում էին վաստակաշատ արվեստագետներ Հայաստանից և աշխարհի տարբեր երկրներից: Հոբելյանների առթիվ աշխարհահռչակ տենորին շնորհավորելու էին եկել պետական գործիչներ, ՄԱԿ-ի փախստականների գլխավոր հանձնակատարի գրասենյակի ներկայացուցիչը, գիտության և մշակույթի ոլորտի գործիչներ, հյուրեր արտերկրից և մեծ վարպետի բազմաթիվ երկրպագուներ:

Ծննդյան 75 և ստեղծագործական գործունեության 50-ամյա հոբելյանների կապակցությամբ, ինչպես նաև հաշվի առնելով հայապահպանության, հայ մշակույթի զարգացման և տարածման գործում ներդրած նշանակալի ավանդը՝ ՀՀ ժողովրդական արտիստ, հայտնի մեներգիչ, տենոր Վիեննայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Վահան Միրաքյանին Հ.Հակոբյանը պարզևատրեց ՀՀ սփյուռքի նախարարության «Կոմիտաս» մեդալով:

«Ես սիրով և ջերմությամբ եմ շնորհավորում մեր սիրելի վարպետի վաստակած փառահեղ հոբելյանները: Բնությունը շոայլ է գտնվել Վահան Միրաքյանի նկատմամբ՝ նրան օժտելով այսպիսի հոյակապ, հզոր ձայնով, որը հիսուն տարի շարունակ ծառայեցնում է արվեստին, հայ արվեստին, հայ բեմին, ինչպես նաև օտարազգի նրբաճաշակ հասարակությանը: Շնորհակալություն Ձեզ, վարպետ, որ Դուք կարողացել եք հայ երգը, հայ արվեստը ներկայացնել աշխարհի շատ ու շատ հայտնի բեմերում: Այսօր, այս դահլիճում ներկա են մարդիկ, ովքեր ճանաչել և Ձեր երիտասարդական տարիներին երկրպագել են Ձեզ՝ հիացած Ձեր ձայնով, Ձեր արվեստով, ովքեր կարոտել և սպասել են Ձեզ և այսօր եկել են լսելու և հիանալու Ձեզնով: Այս երեկոյին ներկա են նաև մարդիկ, ովքեր Ձեր մասին ուղղակի լսել են, գիտեն, բայց ուզում են տեսնել, թե արդյոք 75 տարեկան երիտասարդն ինչպես է երգելու, ինչպես է կարողանալու մի ամբողջ երեկո հաճույք պատճառել մեր հանդիսատեսին», - նշեց նախարար Հ.Հակոբյանը:

Երեկոյի ընթացքում եղան բազմաթիվ շնորհավորանքներ և պարգևներ: Վահան Միրաքյանը պարգևատրվեց նաև ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով, նրան շնորհվեց Երևանի Կոմիտասի ավան պետական կոնսերվատորիայի պատվավոր պրոֆեսորի կոչում:



ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվեց հեռակոնֆերանս Հալեպի հայ համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ

2011-04-28

Հայաստանից հեռակոնֆերանսին մասնակցում էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը և նախարարության աշխատակազմի բոլոր վարչությունների պետերը:

Հալեպում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոսարանում տեսակոնֆերանսին մասնակցում էին Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոս Աշոտ Մանուկյանը, Սիրիայում ՀՀ սփյուռքի նախարարի խորհրդական Լենա Հալաջյանը, Հալեպի հայկական վարժարանների տնօրեններ, ուսուցիչներ, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Նախարար Հ.Հակոբյանը ողջունելով տեսակոնֆերանսի մասնակիցներին՝ ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության 2011թ. ծրագրերը՝ մասնավորապես անդրադառնալով Սփյուռքի ներուժի համախմբման նպատակով այս տարի ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվելիք համահայկական համաժողովներին («Առևտրաարդյունաբերական պալատների ղեկավարների», «Սփյուռքի զարգացման հեռանկարները գլոբալացվող աշխարհում», պլաստիկ վիրաբույժների, հայ բժիշկների, Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների և համայնքների ղեկավարների, հայ խոհարարների, հայ սրտաբանների, հայ ֆերմերների համաժողովներ, Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական երկրորդ համաժողով, «Երիտասարդ լրագրողների վերապատրաստման դասընթաց-հավաք», Երիտասարդ առաջնորդների ամառային դպրոց և այլն):

Հ.Հակոբյանն անդրադարձավ նաև ՀՀ սփյուռքի նախարարության «Մեր մեծերը», «Արի տուն» ծրագրերին, ծանոթացրեց նախախարարության կողմից ստեղծված էլեկտրոնային գրադարանին:

Հալեպից հեռակոնֆերանսի մասնակիցները բազմաթիվ հարցեր ուղղեցին նախարարին, որոնք վերաբերում էին սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագրին, արևմտահայերենի միասնական դասագրքի

ստեղծմանը և այլն:

Հեռակոնֆերանսի ընթացքում Հալեպում ՀՀ գլխավոր հյուպատոսարանում կատարվեց նաև ՀՀ սփյուռքի նախարարության կազմակերպած «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով շարադրության մրցույթի հաղթող աշակերտների պարզևատրման արարողություն:



«Միայն համախմբվածության արդյունքում մենք կունենանք բոլորիս երազած հզոր Հայաստանը, բոլորիս ցանկալի հզոր Հայրենիքը»

2011-04-28

Ողջունելով երիտասարդությանը՝ նախարարը կարևորեց այն, որ երիտասարդները հատկապես այս օրերին են Հայրենիքում, երբ նշվում է Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցը և Հիսուսի հրաշափառ հարությունը:

Հ.Հակոբյանն ուսանողությանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից ՀՀ սփյուռքի նախարարության առջև բարձրացրած երեք կարևորագույն խնդիրները՝ հայապահպանություն, հայ ներուժի հայտնաբերում՝ ի շահ Հայրենիքի հզորացման և հայրենադարձություն:

Նախարարը նաև ամրագրեց այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ուղղությամբ տարվող քաղաքականության մեջ, դրանք ներկայացնելով կարգախոսների տեսքով՝ «Հայաստանը բոլոր հայերի Հայրենիքն է», «Հայ է նա, ով իրեն հայ է զգում», «Յուրաքանչյուր հայ պետք է իր ապրած երկրի օրինապահ և օրինապաշտ քաղաքացին լինի, սակայն երբեք չմոռանալով և չհեռանալով իր հայ ինքնությունից», «Հայն իր Հայրենիքին ծառայելուց բացի պետք է նաև շահ ստանա», «Սփյուռքը բազմաշերտ է, բազմակարծիք և նրա հետ պետք է աշխատել տարածաշրջանային առանձնահատկություններից ելնելով»:

Այս վերջին՝ Սփյուռքը բազմաշերտ է, բազմակարծիք և նրա հետ պետք է աշխատել ըստ տարածաշրջանային առանձնահատկությունների, կարգախոսի առնչությամբ նախարարը հավելեց,- «Ճիշտ է Սփյուռքը բազմակարծիք ու բազմաշերտ է, սակայն համահայկական, համագային հարցերում բոլորս պետք է միասնական և մեկ մտածողություն ունենանք և դա կարծում եմ, արդեն այդպես է, որովհետև չկա հայ, որն անտարբեր լինի Լեռնային Ղարաբաղի, Ցեղասպանության խնդիրներում: Եվ բոլորս միասին, համախմբված պետք է պայքարենք Սփյուռքի ուժացման դեմ պայքարի, հայ եկեղեցու շուրջ համախմբվելու և Հայաստանը հզորացնելու համար: Միայն այս հարցերում համախմբվածության արդյունքում մենք կունենանք բոլորիս երազած հզոր

Հայաստանը, բոլորիս համար ցանկալի հզոր Հայրենիք»:

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը երիտասարդությանը ներկայացրեց նաև նախարարության երիտասարդական ծրագրերը ու դրանցում նրանց հնարավոր դերակատարությունը:



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Հայ առևտրաարդյունաբերական պալատների և գործարարների միությունների ներկայացուցիչների խորհրդատուների մասնակիցներին

2011-04-28

Խորհրդատուները կազմակերպվում է ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ Հայ-կանադական գործարար խորհրդի և Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի աջակցությամբ: Խորհրդատուների կմասնակցի շուրջ 30 մարդ 9 երկրից՝ Կանադա, ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Իրան, Լիբանան, Ավստրալիա, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Հայաստանի Հանրապետություն: Խորհրդատուների բացումը տեղի կունենա ապրիլի 29-ին ժամը 10:00-ին Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նիստերի դահլիճում՝ Խանջյան 11 հասցեով:

Խորհրդատուների բացմանը նեկա կլինի ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Բացման խոսքով հանդես կգա ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, իսկ ողջույնի խոսքով՝ Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Մարտին Սարգսյանը և Կանադա-Հայաստան գործարարների խորհուրդի նախագահ Վահրամ Փիրջանյանը:

Ապրիլի 30-ին խորհրդատուների մասնակիցներին կընդունի ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանը:

Խորհրդատուների մասնակիցները կայցելեն նաև Հայոց Մեծ Եղեռնի գոհերի հիշատակը հավերժացնող Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Խորհրդատուների անցկացման հիմնական նպատակն է՝ ստեղծել «Հայկական առևտրական ցանց» ընկերակցություն, որի գործունեության առանցքային խնդիրներն են՝ ձևավորել գործող հայկական գործարար ընկերակցությունների (միավորումների) համահայկական ցանց, խթանել առևտրաարդյունաբերական պալատների կամ բիզնես խորհուրդների ձևավորման գործընթացը և նպաստել

ծագումով հայ գործարարների ներգրավմանը վերոհիշյալ կառույցներում, նոր գործարար ընկերակցությունների ստեղծմանը Սփյուռքի այն երկրներում, որտեղ դրանք դեռ ձևավորված չեն: Գործարար ընկերակցությունների և ներգրավված անդամների միջև հաղորդակցությունն ապահովելու նպատակով ստեղծել համագործակցության հարթակ՝ նպաստելով բիզնես նախագծերի, ծրագրերի համատեղ իրականացմանը:



Երեւանում տեղի ունեցավ Ուրուզվայի «Կռունկ» համույթի համերգը

2011-04-27

«Այս համերգը Լատինական Ամերիկայում ապրող հայերի համախմբման եւ հայապահպանության արդյունք է: Կոմիտասյան «Կռունկը» միշտ լսում ենք սրտի տրոփյունով: Խորհրդանշական է որ այս

համերգը տեղի է ունենում Մեծ Եղեռնի զոհերի հիշատակման արարողությունից մի քանի օր հետո: Ուրուզվայը առաջիններից էր, որ ընդունեց Հայոց ցեղասպանությունը, եւ ես վստահ եմ, որ դրանում մեծ դեր խաղաց նաեւ Ուրուզվայի հայկական համայնքը»,- ասաց ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Շնորհակալություն հայտնելով խմբի ղեկավար Ալվարո Հակոբյանին՝ նախարարը նրան հանձնեց ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգիրը:

«Կռունկ»-ի համերգը բացում է ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված 20 համերգների շարքը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 20 ամյա հոբելյանին: Երեւանյան համերգից հետո երգչախումբը ելույթ կունենա Գյումրիում եւ Արցախում»-ներկայացրեց նախարարը:

Համերգին ներկա էին մի շարք պաշտոնատար անձինք, ՀՀ-ում հավատարմագրված տարբեր երկրների դեսպաններ եւ մշակույթի գործիչներ:

ՀԲԸՄ-ի Մոնտեվիդեոյի կամերային երգչախումբը հիմնադրվել է 1942 թ-ին և Հարավային Ամերիկայի տարածաշրջանում համարվում է երգչախմբային արվեստում իր ուրույն տեղն ունեցող համույթ: 1993թ-ին ձևավորվում է ֆիլհարմոնիկի «Կռունկ» երգչախումբը, որը սկզբում ուներ միայն 12 անդամներ և բոլորը տարածաշրջանի ամենախոշոր վարժարաններից մեկի՝ Ալեք Մանուկյան դպրոցի սաներն էին: Այժմ այն բաղկացած է 31 անդամից: Երգչախումբը հիմնականում կատարում է հայկական, ժողովրդական, դասական երգեր:

Երգչախմբի գեղարվեստական ղեկավարն է մաեստրո Ալվարո Հակոբյանը: Նա ղեկավարել է Մոնտեվիդեոյի ֆիլհարմոնիկ նվագախումբը: 2007թ-ին

պարգևատրվել է Ուրուգվայի Հանրապետության «Մոռոսոլի» մեդալով, որը համարվում է մշակութային ամենաբարձր պարգևը: Երգչախումբը հանդես է եկել Ուրուգվայի մի շարք դահլիճներում:



Հիշենք հայ ժողովրդի բարեկամ Վուդրո Վիլսոնին

2011-04-27

Ծրագրի շրջանակներում ապրիլի 27-ին Երևանի հ.136 հիմնական դպրոցում կազմակերպվեց բաց դաս, որն անցկացրեց Վ. Բոյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի եվրոպագիտության բաժնի մագիստրոս Անի Աբրահամյանը: Վերջինս ներկայացրեց ԱՄՆ-ի 28-րդ նախագահ, հայ ժողովրդի մեծագույն բարեկամ, հայոց պետականության ստեղծման ջատագով Վուդրո Վիլսոնի աշխատանքային գործունեությունը՝ շեշտը դնելով նրա հայանպաստ դիրքորոշմանը:

Բաց դասի ավարտին ՀՀ սփյուռքի նախարարության գիտակրթական ծրագրերի բաժնի պետ Ս. Համբարյանը հուշանվերներ հանձնեց դպրոցի տնօրինությանը՝ երախտագիտության խոսք հայտնելով արդյունավետ համագործակցության համար: Նշենք, որ հ.136 դպրոցը ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ծրագրերում հանդես է եկել բազմաթիվ միջոցառումներով՝ մասնավորապես Մայրենի լեզվի օր, «Մեր մեծերը» ծրագրերի շրջանակներում: Այն հայաստանյան եզակի դպրոցներից է, որտեղ ստեղծվել է «Սփյուռք» կենտրոն թանգարան:

Բաց դասը համընկավ դպրոցի սաների մասնակցությամբ կազմակերպված միջոցառման հետ՝ նվիրված Ծաղկազարդի և Սուրբ Զատիկի տոներին: Աշակերտները ներկայացրեցին ավանդական Ծաղկազարդի և Սուրբ Զատիկի տոները՝ թատերականացված սցենարով:

Միջոցառման ավարտին ելույթ ունեցավ դպրոցի տնօրեն տիկին Գրետա Թունյանը, ով պատրաստակամություն հայտնեց շարունակել համագործակցել և աջակցել նախարարության ծրագրերին՝ մասնավորապես «Արի տուն» ծրագրին, որի իրականացման համար ներկայացրել է շուրջ երկու տասնյակ հյուրընկալ ընտանիքների հայտադիմում:

Հարկ է նշել, որ ՀՀ սփյուռքի նախարարության Հայաստանի և Սփյուռքի հայկական կրթօջախների համար «Քույր դպրոցներ» ծրագրով նախատեսվում է բարեկամության կամուրջ հաստատել հ.136 դպրոցի և Բոստոնի Սուրբ Ստեփանոս վարժարանի միջև:



Ստորագրվեց համատեղ հոչակագիր «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և Արտաքսված և վտարված անձանց եվրոպական միության միջև

2011-04-26

Ներկա էին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Հայաստանի Հանրապետությունում Իտալիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բրունո Սկապինին, Արտաքսված և վտարված անձանց եվրոպական միության գործադիր տնօրեն Էնրիկո Նեամին և այլք:

Հուշագիրը ստորագրող կողմերին միավորում է այն գիտակցությունը, որ 20-րդ դարում Եվրոպայում իրականացված զանգվածային հալածանքների, բռնի տեղահանման և ցեղասպանությունների պատմական հիշողությունը, որպես աշխարհամասի պատմական և բարոյական ժառանգության մաս, պետք է օրինակ ծառայի եվրոպացիների նոր սերնդի քաղաքացիական և պատմական տեղեկացվածության ձևավորման գործում: Ստորագրելով հուշագիրը՝ Արտաքսված և վտարված անձանց եվրոպական միությունը և ՀՀ սփյուռքի նախարարության հովանու ներքո գործող «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը նպատակ ունեն համագործակցել Հայոց Ցեղասպանության՝ որպես եվրոպական քաղաքացիական հասարակության ժառանգության անբաժանելի մասի, վերաբերյալ տեղեկացվածության ձևավորմանն ուղղված նախագծերում: Նախատեսվում է Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպական խորհրդի կառույցների հետ նախաձեռնել համակարգված գործողություններ՝ պատմական, ավանդական գեղարվեստական և ճարտարապետական ժառանգության տարածմանն ուղղված ծրագրեր հիմնելու և իրականացնելու համար: Հայոց Ցեղասպանության մասին տեղեկատվություն տարածելու նպատակով «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ԱՎԱԵՄ-ի, ինչպես նաև Սփյուռքի կառույցների միջև կայուն հարաբերություններ հաստատելու համար նախատեսվում է հիմնել ցանց՝ օպերատիվ կապ հաստատելով մշակութային, հետազոտական կազմակերպությունների հետ:

Նախարար Հրանուշ Հակոբյանը կարևորելով համագործակցությունը «Նորավանք» ԳԿՀ-ի և ԱՎԱԵՄ-ի միջև՝ նշեց, որ մեծ նշանակություն և խորհուրդ ունի հոչակագրի ստորագրումն այս օրերին, երբ հայ ժողովուրդը ոգեկոչում է Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը:

Դեսպան Սկապինին նշեց, որ հոչակագրի ստորագրումը շատ կարևոր նախաձեռնություն է ոչ միայն Հայաստան-Իտալիա, այլ նաև Հայաստան-Եվրամիություն համագործակցության շրջանակներում, և կարող է օրինակ լինել

նման հանցագործությունների դեմ պայքարի գործում: Անհրաժեշտ է կրթել և իրազեկել մարդկանց՝ կանխելու նման հանցագործությունները:



ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մարսելա Մարիա Նիկոդեմոսին

2011-04-26

Ողջունելով հյուրերին՝ Հ.Հակոբյանը ներկայացրեց ՀՀ սփյուռքի նախարարության առաջիկա ծրագրերը: Անդրադարձ կատարվեց Բրազիլիայի հայ համայնքի հիմնախնդիրներին:

Ներկաները քննարկեցին ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանում Բրազիլիայի դեսպանության համատեղ ջանքերով իրականացվելիք «Հայերի հետքերը Բրազիլիայում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում սեպտեմբերին Հայաստանի ազգային պատկերասրահում Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի և Բրազիլիայի Դաշնային Հանրապետության անկախության օրվա առթիվ նախատեսվում է կազմակերպել բրազիլահայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես՝ «Հայերի հետքերը Բրազիլիայում» խորագրով:

Դեսպան Մ.Նիկոդեմոսը նախարար Հ.Հակոբյանին տեղեկացրեց, որ Բրազիլիա կատարելիք առաջիկա այցի ընթացքում նախատեսում է հանդիպել հայ համայնքի ներկայացուցիչներին, ծանոթանալ նրանց հիմնախնդիրներին:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաև Սան Պաուլոյի հայազիտական կենտրոնին, որին աջակցում է ՀՀ սփյուռքի նախարարությունը:

Սփյուռք



ԱՄՆ-ում ստեղծվել է Դիարբեքիի հայկական եկեղեցիների վերականգնման հիմնադրամ

2011-04-30

Ժողովի ընթացքում քննարկվել են ֆինանսական հարցեր՝ կապված եկեղեցու վերականգնման հետ:

Հիմնադրամի անդամների շարքում ԱՄՆ-ում ՀԱԵ Արևելյան թեմի ղեկավար արքեպիսկոպոս Խաժակ Բարսամյանն է, Կոստանդնուպոլսի պատրիարքության աթոռակից պատրիարք Արամ Աթեշյանը և ՄԱԿ-ում Հայաստանի դեսպան Կարեն

Նազարյանը:

Սր. Կիրակոս Եկեղեցին կառուցվել է 15-րդ դարում: 1880-ին վերակառուցվել և ընդլայնվել է հրդեհից հետո: Այն ներկա պահին Անատոլիայի ամենամեծ Եկեղեցին է, հայտնի է իր յոթ խորաններով, կարող է տեղավորել 2500 հոգի: Եկեղեցին պատկանում է ՀԱԵ Կոստանդնուպոլսի պատրիարքությանը, Ստամբուլում արդեն խումբ է ստեղծվել եկեղեցու վերականգնման աշխատանքները որոշելու համար, որն անհրաժեշտ է հայերի ապագա սերունդների համար, գրում է The Armenian Weekly-ն:



Օլեգ Եսայան. Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մեկը նույնության պահպանումն է

2011-04-28

Նախօրեին գիտաժողովի մասնակիցների հետ հանդիպմանը Օլեգ Եսայանը երախտագիտություն էր հայտնել Նիժեգորոդյան հայ համայնքի ղեկավարությանը նման միջոցառում կազմակերպելու համար, այն նվիրված է Հայաստանի անկախության հռչակման 20-ամյակին: Օլեգ Եսայանը պատմել է դեսպանատան գործունեության մասին, շեշտել առաջնահերթություններն ու խնդիրները, ինչպես նաև պատասխանել հավաքվածների հարցերին: Նրա կարծիքով, Ռուսաստանի հայ համայնքների հիմնական խնդիրներից մեկն է ապահովել հայրենակիցների ինտեգրումը ռուսական հասարակության մեջ և նույնության պահպանումը:

Գիտաժողովը կրացվի լիագումար նիստով, որից հետո մասնակիցները կքննարկեն տարբեր բնագավառների արդիական խնդիրները: Միջոցառումը կավարտվի «Ժամանակակից ռուս-հայկական հարաբերություններ՝ խնդիրներ, ձեռքբերումներ և հեռանկարներ» կլոր սեղանով, ինչպես նաև ամփոփիչ հռչակագրի ընդունմամբ, հաղորդում է «Հայերն աշխարհում» պորտալը:



Ստամբուլում տեղի է ունեցել բանակում սպանված հայ պատանու հուղարկավորությունը

2011-04-28

Ինչպես գրում է թուրքական Radikal-ը, սպանված պատանու հիշատակը եկել էին հարգելու ինչպես հայեր, այնպես էլ թուրքեր: Ծաղկեպսակներ են դրվել ինչպես զինվորականներից, այնպես էլ տեղական իշխանություններից, այդ թվում Ստամբուլի քաղաքապետից: Զինվորի թաղմանն ու հոգեհանգստի արարողությանը մասնակցել է ՀԱԵ Կոստանդնուպոլսի աթոռակից պատրիարք, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանը, ինչպես նաև Հրանտ Դինքի այրին: Սևակին թաղեցին Ստամբուլի Շիշլի թաղամասի հայկական գերեզմանատանը:

Ապրիլի 24-ին Բաթմանի գավառի զորամասերից մեկում սպանվեց ծագումով հայ 25-ամյա Սևակ Շահին Բալքրչին: Մահվան հանգամանքների մասին տեղեկությունները տարաբնույթ են ու հակասական: Զեկույցներից մեկում ասվում է, որ «նա սպանվել է զենքի հետ անզգույշ վարվելու արդյունքում»: Մեկ այլ վարկածով, նրան միտումնավոր սպանել են ատրճանակից:



Սոֆիայի Երևանյան պուրակում տեղի է ունեցել Հայոց Մեծ Եղեռնի 96-րդ տարելիցին նվիրված հավաք

2011-04-27

Ինչպես հայտնում է ՀՀ ԱԳՆ մամուլ ծառայությունը, հանրահավաքին ելույթներով հանդես եկան

Բուլղարիայում Հայաստանի դեսպան Արսեն Սիոյանը, «Երևան» թերթի գլխավոր խմբագիր, Բուլղարիայի «Հայ Դատի» հանձնախմբի անդամ տիկին Վարդանուշ Թովաքբաշյանը, բուլղարական «ԼԵՎՐԵՊԵՏ» ամսագրի խմբագիր և քաղաքական մեկնաբան Լյուբեն Դիլովը:

Հայաստանի դեսպանը նշեց, որ մարդկության դեմ ուղղված այդ հանցագործությունը առ այսօր միջազգային ողջ հանրության կողմից չի դատապարտվել, թեև շատ երկրներ՝ Ռուսաստանը, Ֆրանսիան, Եվրախորհուրդը, Եվրոպական մի շարք երկրներ, Հարավային Ամերիկայի և ԱՄՆ մի քանի նահանգներ արդեն իրենց ճշմարիտ խոսքն են ասել: Իր ելույթում դեսպանը կարևորեց նաև Բուլղարիայի Հանրապետության մի շարք քաղաքային և համայնքային խորհուրդների կողմից 1915 թ. Օսմանյան կայսրության կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու վերաբերյալ արդեն մեկ տասնյակից ավելի ընդունված որոշումները:

Վառնայի հայ առաքելական «Սուրբ Սարգիս» եկեղեցում ի հիշատակ Եղեռնի զոհերի եկեղեցու բակում տեղադրված խաչքարի մոտ տեղի ունեցավ պսակի զետեղման և մոմավառության արարողություն:

Եկեղեցու բակում տեղի ունեցավ հանրահավաք որից հետո ներկաները պաստառներով բողոքի երթով շարժվեցին դեպի քաղաքի կենտրոն:

Ապրիլի 24-ին Պլովդիվի Զինվորական ակումբի մոտից մեկնարկեց բողոքի երթ դեպի Պլովդիվի հայ առաքելական «Սուրբ Գևորգ» եկեղեցի բակում տեղադրված 1915թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին խաչքարը, որտեղ և տեղի ունեցավ լուռության բռնակ, պսակի զետեղման և մոմավառության արարողություն: Ապրիլի 25-ին Պլովդիվի հայկական գերեզմանատանը սգո պատարագ մատուցվեց 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին:

Ապրիլի 25-ին Բուրգասի հայ առաքելական «Սուրբ Խաչ» եկեղեցում սգո

պատարագ մատուցվեց անմեղ զոհերի հիշատակին:

Ցեղասպանության զոհերի հիշատակի հուշարձանի մոտ տեղի ունեցավ հանրահավաք, լռության րոպե, ծաղկեպսակի զետեղման և մոմավառության արարողություններ: Հանրահավաքին ներկա էին Բուրգասի քաղաքապետարանի, համայնքային խորհրդի , ԲՀ ԲԺԾ պատգամավորներ, բուլղար հասարակական-քաղաքական գործիչներ և հայ համայնքի ներկայացուցիչներ: Նույն երեկո Բուրգասի ազգային վարժարանի դահլիճում ցուցադրվեց իտալացի հանրահայտ կինոբեմադրիչներ Տավիանի եղբայների նկարահանած «Արտույտների ազարակ» գեղարվեստական ֆիլմը:

Արարական Միացյալ Էմիրություններում նշել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

2011-04-27

Հուշ-երեկոյի սկզբում ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին 1915 թ. Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված և իրականացված Հայոց Ցեղասպանության 1.5 միլիոն նահատակների հիշատակը, որից հետո ցուցադրվեց Մեծ Եղեռնին նվիրված «Աղետ» փաստավավերագրական տեսաֆիլմը:

Այնուհետև, Սրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում մատուցվեց հոգեհանգստյան պաշտոն: Ավարտից հետո եկեղեցու բակում կանգնեցված` Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակը խորհրդանշող խաչքար-հուշարձանին ծաղկեպսակ և ծաղիկներ դրվեցին ԱՄԷ-ում ՀՀ դեսպանության, համայնքային կազմակերպությունների և ներկաների անունից, որին հաջորդեց մոմավառության ավանդական արարողությունը:

Հայոց Ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված ոգեկոչման երեկոները կշարունակվեն ապրիլի 29-ին և 30-ին ԱՄԷ Շարժա և Աբու Դաբի քաղաքներում, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլո ծառայությունը:



Կալկաթայի Սուրբ Պողոս Մայր Տաճարում նշել են Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցը

2011-04-26

Ամեն տարի Սուրբ Զատիկի տոնին Կալկաթայի քրիստոնյաները հավաքվում են Անգլիական Սուրբ Պողոս Մայր Տաճարի հարակից տարածքում` փառաբա-նելու մեր Տիրոջ` Հիսուս Քրիստոսի հրաշափառ հարությունը: Հոգևոր և մշա-կութային հանդիսությունը եզրափակում է Կալկաթայի կաթոլիկ արքեպիսկոպոսն իր Զատիկական պատգամով: Այս տարի առ ի հարգանք Մեծ Եղեռնի զոհերի` տոնախմբության կազմակերպիչները հրավիրել էին հնդկահայոց հո-գևոր հովիվ, Հայոց

մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հայր Խորեն Հովհաննիսյանին՝ աղոթելու և իր պատգամը փոխանցելու:

Հանդիսավար անգլիկան հոգևորական Հայր Անդրյու Սիմիկը մինչ հնդկա-հայոց հոգևոր հովվին բեմահարթակ հրավիրելը՝ ներկաներին հայտնեց, որ այս տարի Սուրբ Զատիկը համընկնում է Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցի հետ և մասնակիցներին հրավիրեց աղոթելու 1,5 միլիոն անմեղ նահատակաց համար: Հայր Խորենը նախ հայերենով աղոթեց Մեծ Եղեռնի զոհերի հոգիների խաղաղության համար, ապա խոսեց Հայոց ցեղասպանության մասին՝ ի մասնավորի ասելով. «Ամեն տարի՝ ապրիլի 24-ին, ողջ աշխարհի հայությունը ոգեկոչում է Օսմանյան թուրքերի կողմից հայության բնաջնջման փորձը՝ 1915 թվականի 1,5 միլիոն զոհերի հիշատակը: Այդ կոտորածին զոհ գնացին անմեղ ու անպաշտպան մանուկներ, ծերեր, կանայք ու տղամարդիկ... Թուրքական ժխտողականության պատճառով Ցեղասպանությունից հետո մնացած մեր վերքը դեռ չի ապաքինվել, նրանից շարունակում է արյուն ծորալ... Մի ամբողջ ազգ խաչին գամվեց միայն քրիստոնյա, միայն հայ լինելու համար...»:

Երեկոյին մասնակցեց նաև Հայոց մարդասիրական ճեմարանի երգչախումբը՝ կատարելով հատվածներ Սուրբ Պատարագից:

Ղազախստանի և Ղրղզստանի մի շարք քաղաքներում հարգել են Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը

2011-04-26

«Սուրբ Կարապետ» եկեղեցում կրոնական արարողությանը ներկա են գտնվել հարյուրավոր հայեր, որոնք մեկ րոպե լռությամբ հարգել են հայ նահատակների հիշատակը:

Պատարագի ավարտին Հայ Առաքելական եկեղեցուն առընթեր Ալմաթի հայկական մշակութային տան դահլիճում տեղի է ունեցել հիշատակի միջոցառում՝ նվիրված Մեծ Եղեռնի տարելիցին: Միջոցառումը սկսվել է «Աղանա» տեսահոլովակի ցուցադրմամբ, որից հետո ելույթներ են ունեցել «Սուրբ Կարապետ» եկեղեցու հովիվ՝ Տեր Մարկոս քահանան և տեղի հայ համայնքի ներկայացուցիչները: Նրանք իրենց ելույթներում դատապարտել են 1915թ. Հայոց ցեղասպանության ոճրագործներին և համոզմունք հայտնել, որ նմանօրինակ հանցագործությունները ժողովրդի, ազգի, մարդկության դեմ բացառելու համար, պետք է ժամանակին իրենց արժանի գնահատականը ստանան համայն մարդկության կողմից:

Այնուհետև տեղի կիրակնօրյա դպրոցի սաները ներկայացրել են հատվածներ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմից: Հնչել են Կոմիտասի «Կունկը» երգիչներ Հասմիկ Ավդալյանի և «Դլե-յամանը»՝ Պարգև Խաչատրյանի կատարմամբ: Հիշատակի միջոցառումը եզրափակել է «Նաիրի» պարի համույթը՝

ներկայացնելով «Խաչքար» պարը:

Ապրիլի 24-ին Աստանա քաղաքում «Վան» հայկական մշակութային կենտրոնի ղեկավարությունը, ՂՀ-ում ՀՀ դեսպանության անմիջական մասնակցությամբ, կազմակերպել էր հուշ-հավաք՝ ի հիշատակ 1915 թվականի Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի: Հավաքի մասնակիցները վաղ առավոտյան այցելել են տեղի ուղղափառ եկեղեցի և մոմեր վառել՝ ի հիշատակ 1915թ. անմեղ զոհերի: Այնուհետև «Վան» հայկական մշակութային կենտրոնում հավաքի մասնակիցները ներկա են գտնվել Հայոց ցեղասպանությանը նվիրված փաստագրական ֆիլմի ցուցադրությանը:

Կարագանդայի «Մպասկ» հուշահամալրի Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակին նվիրված խաչքար-հուշակոթողի առջև այսօր տեղի է ունեցել Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշ-հավաք: Հավաքի մասնակիցները ծաղիկներ են զետեղել խաչքարին և հարգանքի տուրք մատուցել հայ անմեղ զոհերին՝ մեկ րոպե լռությամբ:

Ապրիլի 24-ին հիշատակի արարողություններ են կայացել նաև Պետրոպավլովսկի, Պավլոդարի, Ուստ Կամինսկոյի, Կոստանայի և Ղազախստանի այլ հայաշատ քաղաքներում:

Մեծ Եղեռնի զոհերի հիշատակության օրը նշվել է նաև Բիշքեկում: ՀՀ պատվավոր հյուպատոսի գրասենյակը և «Նաիրի» հասարակական միությունը կազմակերպել էին հուշ-հավաք և ծաղկեպսակների զետեղման արարողություն՝ հայկական խաչքարի առջև:



Ապրիլի 24-25 Սիրիայում անցել են միջոցառումներ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի

2011-04-26

Ապրիլի 25-ին սգո արարողություն տեղի ունեցավ Դամասկոսի հայոց գերեզմանատանը՝ ուր գտնվում է Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը: Հուշահամալիրում Սիրիայում Հայաստանի դեսպան Արշակ Փոլադյանը և դեսպանության անձնակազմը ծաղկեպսակ զետեղեցին եղեռնի զոհերի հուշարձանին:

Արարողությանը մասնակցեցին բազմաթիվ սիրիահայեր, Հայաստանի քաղաքացիներ, լրագրողներ, հասարակական գործիչներ:

Նույն օրը Սիրիայում Հայաստանի դեսպանություն այցելեցին սիրիահայ համայնքի երեք համայնքապետերը, սիրիահայ համայնքի կուսակցական և

միութենական ղեկավարները, գաղութի ներկայացուցիչները և գրառում կատարեցին ոգեկոչման հուշամատյանում:



Վաշինգտոնում թուրքերը և ադրբեջանցիները փորձել են ձախողել Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ակցիան

2011-04-26

Ինչպես հաղորդել են PanARMENIAN.Net ին Վաշինգտոնից, մի քանի տասնյակ ադրբեջանցիներ և թուրքեր նույնպես եկել էին դեսպանատան մոտ ակցիայի անցկացմանը խանգարելու համար: Դեսպանատան ճանապարհին ադրբեջանցիների մեքենան կանգնեցրել են երկու ոստիկաններ, որոնք պահանջել են բացել մեքենայի բեռնախցիկը, որտեղ եղել են բեյսբոլի մահակներ: Ոստիկանի հարցին, թե ինչու են ավտոմեքենայի ուղևորները մահակներ տանում խաղաղ ակցիայի համար, վարորդը չի կարողացել պատասխանել:

Ոստիկանները բաց են թողել մեքենան, որը շարժվել է թուրքական դեսպանատան մոտ, որտեղ արդեն հավաքվել էին հայերը՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին հարգանի տուրք մատուցելու համար:

Թուրքերը և ադրբեջանցիները աղմուկ են բարձրացրել՝ բղավելով վիրավորական կարգախոսներ: Եթե չլիներ ոստիկանության միջամտությունը, դեսպանատան մոտ կարող էր ծեծկոտուք սկսվել, սակայն ոստիկաններն արագ կասեցրել են հայերի ցույցը ձախողելու թուրքերի փորձերը: Ադրբեջանցիները և թուրքերը ձեռքերում պահել են ցուցապաստառներ «Շնորհակալություն Ամերիկա, որ չես պատասխանում հայկական մեղադրանքներին» գրությամբ:

Թուրքիան և Ադրբեջանը Հայոց ցեղասպանությունն անվանում են «մտացածին» և հսկայական ջանքեր են գործադրում՝ համաշխարհային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը թույլ չտալու համար:



ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՐԳԵԼ ԵՆ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

2011-04-26

Այս տարի ի նշան հարգանքի առ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, Սուրբ Զատիկի տոնի կազմակերպիչները հրավիրել են Հնդկաստանի հայերի հոգեւոր հովիվ, հայր Խորեն Հովհաննիսյանին աղոթք կարդալու եւ հավատացյալներին դիմելու համար:

Ամեն տարի Սուրբ Զատիկին Կալկաթայի քրիստոնյաները հավաքվում են Սուրբ Պողոս անգլիական տաճարում:



**Արամ Ա-ն կարելորում է Հայոց
ցեղասպանության 100-ամյակի առթիվ
ստեղծված հանձնաժողովի
գործունեությունը**

2011-04-26

Ապրիլի 23-ին Հայ կաթողիկե պատրիարքարանի բակում կազմակերպվել էր «Հսկման երեկո»: Միջոցառման ժամանակ ելույթ ունեցան Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը, “Վանա ձայն” ռադիոկայանի տնօրեն Ավետիս Կիտանյանը, “Արարատ” թերթի ներկայացուցիչ Ալեքսան Բյոշքարյանը եւ Teleumiere քրիստոնեական հեռուստակայանի լրագրող Լոռա Նասնուն: Երաժշտական համարներով հանդես եկան հայկական կրթօջախների սաները:

Դեսպան Քոչարյանը նշեց, որ 96 տարի առաջ Օսմանյան կայսրությունում կազմակերպված ոճրագործությունն իր հրեշավորությամբ եւ անմարդկային դաժանությամբ նախադեպը չունեւ համաշխարհային պատմության մեջ:

Միջազգային հանրությունը պետք է միասնական լինի ցեղասպանության դատապարտման, կանխարգելման գործում:

Ապրիլի 24-ին՝ ուշ երեկոյան Անթիլիասի մայրավանքի մատուռի մոտ մատուցված հոգեհանգստի արարողությունից հետո, ՀՀ դեսպանության անձկակազմի ուղեկցությամբ դեսպանը ծաղկեպսակ զետեղեց մատուռի առջև: Այնուհետև տեղի ունեցավ ոգեկոչման արարողություն, որի ընթացքում ելույթ ունեցան ՀՅԴ, ՌԱԿ, ՄԴՀԿ կուսակցությունների ներկայացուցիչները, դեսպան Աշոտ Քոչարյանը եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն:

Ելույթ ունեցողներն անդրադարձան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կարելորությանը եւ պատմական արդարության վերականգնման խնդիրներին : Դեսպան Քոչարյանը նշեց, որ Հայոց ցեղասպանությունը մեր ժողովրդի պատմության ամենադաժան եւ ողբերգական էջն է, որի հետեւանքով հայ ժողովուրդը կորցրեց իր պատմական հայրենիքը, 1,5 միլիոն մարդկային կյանք եւ հազարամյակների ընթացքում ստեղծված հոգեւոր եւ նյութական հսկայական ժառանգություն: Այդ ծանրագույն հանցագործությունն ուղղված էր ոչ միայն հայ ժողովրդի, այլև ողջ մարդկության դեմ: Նա ընդգծեց, որ ցեղասպանություն վերապրած մեր հայրենակիցները շատ կարճ ժամանակահատվածում Լիբանանում իշխանությունների եւ ժողովրդի եղբայրական վերաբերմունքի շնորհիվ ստեղծեցին մի ծաղկուն հայկական գաղթօջախ բազմաբնույթ

կառույցներով, կարողացան պահպանել հարուստ ազգային մշակույթն ու արժեքները եւ լինելով լիիրավ քաղաքացիներ՝ իրենց աշխատասիրության եւ տաղանդի շնորհիվ շարունակեցին իրենց ստեղծագործական կյանքը եւ աճեցրեցին հայախոս ու հայրենասեր նոր սերունդներ: Շնորհակալություն հայտնվեց Լիբանանին, մասնավորապես նրա խորհրդարանին Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ն կարեւորեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող՝ ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծված պետական հանձնաժողովի ապագա գործունեությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ:

Ելույթ ունեցողները միակարծիք էին, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումն ու դատապարտումը հայ ժողովրդի համար պատմական արդարության վերականգնման խնդիր է: Հատուկ ընդգծվեց Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի միասնականության անհրաժեշտությունը արդի աշխարհի բոլոր մարտահրավերների հաղթահարման եւ հայոց պետականության հզորացման ենթատեքստում:

Ապրիլի 25-ին Լիբանանում ՀՀ դեսպանատանը բացվեց Ցեղասպանության զոհերի ոգեկոչման հուշամատյան: ՀՀ դեսպանություն այցելեցին եւ հուշամատյանում իրենց գրառումները թողեցին բազմաթիվ խորհրդարանականներ, նախարարներ, կուսակցությունների ներկայացուցիչներ, հոգևորականներ, տարբեր երկրներից դիվանագետներ: Ցուցադրվեցին ժապավեններ Հայոց ցեղասպանության մասին: Այցելուներին ներկայացվեց հայ գրականությունը, տեղի ունեցավ նկարների ցուցահանդես:

Նույն օրը ՀՀ դեսպանության անունից ծաղկեպսակ դրվեց Հայ կաթողիկե պատրիարքարանի բակում տեղադրված Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշակոթողին:

Այնուհետեւ Հայկազյան համալսարանում տեղի ունեցավ պոեզիայի, պատմվածքների եւ երաժշտության երեկո՝ նվիրված Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին: Հնչեցին Միամանթոյի, Գեւորգ Էմինի, Հովհաննես Թումանյանի եւ Ղեւոնդ Ալիշանի բանաստեղծությունները: Հայաստանից ժամանած Աննա Մախյանի ղեկավարած էթնո վոկալ տրիոն կատարեց Կոմիտասի եւ Մխիթար Այրիվանեցու ստեղծագործությունները: Երեկոյի ընթացքում ՀՀ դեսպանը հավաքվածների ուշադրությանը ներկայացրեց պատմական փաստեր եւ վկայություններ Հայոց ցեղասպանության վերաբերյալ եւ նշեց, որ համայն աշխարհի հայերն այս օրերին ոգեկոչում են ցեղասպանության անմեղ նահատակների հիշատակը: Միջոցառմանը մասնացեցին նաեւ պաշտոնյաներ,

օտարերկյա դիվանագետներ, միջազգային իրավունքի եւ մարդու իրավունքների մասնագետներ, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամլո ծառայությունը:



Բաթումում հարգանքի տուրք է մատուցվել Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին

2011-04-26

Ոգեկոչման արարողությունից հետո եկեղեցում կազմակերպվել է Մեծ Եղեռնի դեպքերը լուսաբանող

ֆիլմի ցուցադրում, հաղորդում է ՀՀ ԱԳՆ մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ կապի վարչությունը:



Իրանի գլխավոր հայկական համայնքները նշել են Հայոց Յեղասպանության 96-րդ տարելիցը

2011-04-26

Նոր Ջուղայի Սբ. Ստեփանոս եկեղեցում տեղի է ունեցել հսկումի արարողություն, իսկ հետո

մեկնարկել է ավանդական ցույցը՝ մոմերով երթը: Ներկաները շարժվել են դեպի Սբ. Ամենափրկիչ վանք, որտեղ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հուշարձանի մոտ տեղի է ունեցել բողոքի համահավաք, մոմավառություն եւ ծաղիկների մատուցում: Բողոքի համահավաքի ընթացքում ելույթներ են ունեցել՝ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Բարգեն եպս. Չարյանը, Սպահանի հայոց Թեմական խորհրդի ատենապետ Նոել Մինասյանը եւ Հայոց Յեղասպանության 96-րդ տարելիցի ոգեկոչման Նոր Ջուղայի հանձնախմբի ներկայացուցիչը:

Բողոքի համահավաքին հաջորդել է «Ռուբեն» երիտասարդական միության նախաձեռնությամբ կազմակերպված բաց զրուցարանը, որի ընթացքում համայնքի երիտասարդները sms քվեարկություններով եւ ելույթներով իրենց տեսակետներն ու առաջարկներն են հայտնել Հայոց Յեղասպանության հետեւանքով առաջացած կորուստների եւ Յեղասպանության փաստն ուրանալու Թուրքիայի պատճառաբանությունների մասին:

Ապրիլի 24-ին երեկոյան թեհրանահայերը հավաքվել էին Սբ. Սարգիս եկեղեցում՝ ոգեկոչելու Հայոց Յեղասպանության մեկուկես միլիոն նահատակների հիշատակը, որի ընթացքում տեղի ունեցավ հոգեհանգիստ, ծաղիկների մատուցում Նահատակների հուշարձանի մոտ, եւ երիտասարդական համահավաք:

Ծրագիրը սկսվեց հոգեհանգստյան արարողությամբ, որը նախագահում էր Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Մեպուհ արք. Սարգսյանը. այն կատարվեց եկեղեցու բակում գտնվող Նահատակների հուշարձանի մոտ: Հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էր Ս. Սարգիս եկեղեցու երգչախումբը:

Մեծ Եղեռնի Նահատակների հոգիների խաղաղության համար հուշարձանի մոտ կատարվող կրոնական արարողությունից եւ խնկարկումից հետո ներկաներին իր խոսքն ուղղեց թեմակալ առաջնորդը:

Սրբազան Հոր ելույթից հետո սկսվեց ծաղիկների մատուցման արարողությունը: Ծաղկեմատույցից հետո տեղի ունեցավ երիտասարդական համահավաք, հայտնում է Հայաստանի ԱԳՆ մամլո ծառայությունը:



Փարիզում Հայոց ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված ցույցին մոտ 5 հազար մարդ էր հավաքվել

2011-04-25

Ապրիլի 24-ին Փարիզում կայացավ Օսմանյան կայսրությունում իրագործված Հայոց

ցեղասպանության 96-րդ տարելիցին նվիրված հանրահավաք: Ակցիան սկսվեց Թուրքիայի դեսպանատնից, որի դիմաց հավաքվածները պահանջում էին ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Այնուհետև ցույցը շարունակվեց Կոմիտասի հուշարձանի մոտ:

Ակցիայի ընթացքում Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների ներկայացուցիչները կոչ էին անում մայիսի 4-ին հավաքվել Սենատի մոտ, որտեղ Սահմանադրության հանձնաժողովում քննարկվելու է Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման մասին օրինագիծը: Ինչպես հայտնի է դարձել PanARMENIAN.Net ի թղթակցին, օրինագիծն արդեն ընդգրկվել է հանձնաժողովի օրակարգում, և մայիսի 4-ին կմեկնարկեն դրա քննարկումները:

Սպորտ



Հայաստանի ձյուդոյի հավաքականը World Children's Games փառատնում 3 մեդալ է նվաճել

2011-04-30

Երկրորդ օրը տատամի դուրս եկան 50, 55, 60 և +60 կգ քաշային կարգերի մասնակիցները:

50կգ քաշային կարգում հանդես եկող Կառլեն Ղազարյանը մեկ հաղթանակից և մեկ պարտությունից հետո 3-րդ տեղի համար գոտեմարտում հաղթեց Ադրբեջանը ներկայացնող Էմին Դամիրզադեին և գրավեց 3-րդ պատվավոր տեղը:

60 և +60 կգ քաշային կարգերում հանդես եկող Գրիգոր Սահակյանը և Շավարշ Սահակյանը մտան կիսաեզրափակիչ և երկուսն էլ պարտվեցին Ռուսաստանի ձյուդոիստներին: 55կգ քաշային կարգում հանդես եկող Արմեն Դավթյանը

բավարարվեց 5-րդ տեղով, PanARMENIAN.Net ին են հայտնել Հայաստանի ձյուդոյի ֆեդերացիայում:

Ապրիլի 28-ին Հայաստանի հավաքականի համար մեղալներ են նվաճել նաև Էդգար Գառնիկյանն ու Գոռ Հակոբյանը: Գևորգյանը դարձել է փոխչեմպիոն, իսկ Հակոբյանը՝ գրավել է երրորդ տեղը:

Մայիսի 1-ին տեղի կունենա խաղերի հանդիսավոր փակումը, մայիսի 2-ին մեր պատվիրակությունը հետ կվերադառնա Հայաստան:



Հայտարարություններ
«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԵՐԱԺԻՇՏ-ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ-ՓԱՌԱՏՈՆՆ՝ ԱՐԴԵՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԴԱՐՁԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

2011-04-28

«Վերածնունդ» փառատոնը՝ որպես արվեստի տոն, միջմշակութային փոխառնչությունների, փորձի փոխանակման, արվեստի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման հրաշալի հնարավորություն է:

Իրականացվելով 2007 թվականից՝ այն հասցրել է դառնալ սպասված ու սիրելի մշակութային միջոցառում Հայաստանում և նրա սահմաններից դուրս բնակվող արվեստասեր հասարակության, մասնավորապես՝ պատանիների ու երիտասարդների համար, որոնք հաղորդակցվում են դասական արվեստի հետ, ներկայացնում, հաճախ նաև բացահայտում են սեփական կարողությունները:

Հաջողություն և բարի երթ փառատոնի բոլոր մասնակիցներին:

ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի Համահայկական ծրագրերի վարչություն



Թբիլիսահայերի ասամբլեայի մամուլի ծառայություն

2011-04-28

Նիստի ընթացքում ցուցադրվեց գերմանացի ռեժիսոր Էրիկ Ֆրիդլերի՝ ԱՄՆ և Եվրոպայի պահոցներում պահվող փաստաթղթերի ու նյութերի հիման վրա նկարահանած Հայոց ցեղասպանության մասին

պատմող “Ագետ” վավերագրական ֆիլմը:

Ցավոք, Թբիլիսիի քաղաքային խորհրդի աշխատակազմի ղեկավար տիկին Մարինա Դաթուկաշվիլիի հրահանգով ֆիլմի դիտմանը արգելվեց վրացի և օտարերկրացի լրագրողների մուտքը:

Այս կապակցությամբ այսօր, ապրիլի 29-ին, ժամը 12.00 Քաղաքային խորհրդի շենքի մուտքի մոտ կկայանա մամուլի ասուլիս, որի ժամանակ կարվի հատուկ հայտարարություն: